

Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԵՊՀԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌԵՔԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1

ք. Երևան ____/_____/2023թ.

« ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ »-ը ի դեմս պրոռեկտոր Արման Մալխասյան ի, որը գործում է « ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գևորգ», մի կողմից, և « Իմմունոֆարմ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Խաչատուր Շաքարյան ի, որը գործում է « Իմմունոֆարմ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գևորգին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ^tender_code^ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գևորգը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո

անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 259800000.00 AMD(երկու հարյուր հիսունիններ միլիոն ութ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:^{629^{Ա1}}

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

^{730^{Ա2}}

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը:

—

-

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31^[3]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գևորգը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գևորգը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գևորգը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գևորգը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գևորգը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:^{9 3⁴¹} Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու

դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

13¹⁸¹

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

01506928

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ

Երևան, Ներսիսյան 10-3/1

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

2500010857380100

00650292

/ստորագրություն/

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

¹¹₂₉ ⁶ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹²₃₀ ⁷ Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի

միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

¹³¹³¹ ⁸ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխալին ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

¹⁴¹⁹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

¹⁵¹¹⁰ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

¹⁶¹¹¹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁷¹¹² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁸¹¹³ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|--------------------------------------|---|--|---|--|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում* | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 33111450/2 | Տատանողական և մաս սպեկտրոսկոպիայի կայան համակցված գազ քրոմատոգրաֆի հետ | Thermo Fischer, Thermo Fishcer Scientific USA, Nicolet iS50 FTIR Advanced with IS 50 Raman Module , GC-Module include Trace 1310 GC, Trace 1610 GC and ISQ 7610 GCMS systems, Thermo Fischer | Սպեկտրաչափը պետք է լինի լավ փակված և չոր • Օպտիկական սպեկտրալ դիապազոնը - 11000-375 սմ-1 - սպեկտրալ դիապազոնի ընդլայնման հնարավորություն մինչև 27 000 - 20 սմ-1 • Լուսաբաժանիչ XT-KBr Gold Spectrometer (11 000 - 375 սմ-1) • Դետեկտոր top-mounted DLaTGS • Ներառում է օգտագործողի կողմից փոխարինվող հելիում նեոնային լազերային աղբյուր • "pinned-in-place" օպտիկա, որը կարգավորում չի պահանջում, օգտագործողի կողմից մասերը փոխարինելու հնարավորությամբ • սարքի բոլոր բաղադրիչների |

և խոնավության մակարդակի ավտոմատ ախտորոշման համակարգ օնլայն ռեժիմում • Ազդանշան:աղմուկ հարաբերությունը 55000 • Սպեկտրալ տարալուծելիությունը 0.09 սմ-1 • Ալիքի երկարության ճշտությունը 0.01 սմ-1, առանց ծրագրային միջամտության • Սկանավորման արագությունը 0.0063-8.86 սմ/վ (24 ֆիքսված արժեքով) • Արտաքին 4 մուտքերի առկայություն • Սպեկտրաչափը օժանդակում է 5 դետեկտորներ ներառյալ ռաման սպեկտրաչափի մոդուլ և լրիվ ներքին անդրադարձման խախտման (ATR) կցորդ (ալմաստ պրիզմա), • սպեկտրոմետրի մեջ ներկառուցված անշարժ լրիվ ներքին անդրադարձման խախտման (ATR) կցորդ ալմաստի բյուրեղով և սեղմող սարքով տեղադրելու հնարավորություն • ԻԿ խցիկում մոդուլային ռաման սպեկտրաչափի տեղադրման հնարավորություն • Գազային քրոմատագրի միացման հնարավորություն • Օրգանական և անօրգանական նյութերի գրադարան 9000 սպեկտր, ներառյալ ԻԿ սպեկտրների մեկնաբանման և պոլիմերների վերլուծության վերաբերյալ ուղեցույց • ԻԿ Ծրագրային ապահովում տվյալների հավաքագրման և մաթեմատիկական վերլուծության համար Omnic 9 • Մալուխ սարքը միացնելու համար • Հայելի ճառագայթի ելքի, արտաքին մոդուլների միացման համար • Ապակիների և չորացուցիչի հավաքածու արտաքին ճառագայթի ելքի համար Լրիվ ներքին անդրադարձման խախտման (ATR) կցորդ` ներկառուցված ԻԿ սպեկտրաչափի մեջ 1 հատ • Կցորդի բնութագրերը : Մոնոլիթիկ ալմաստ, ծրագրային ակտիվացմամբ, սպեկտրալ միջակայքը 80-ից 5000 սմ-1, օպցիոնալ 50-4000 սմ-1, հնարավորությամբ , բարձր ճնշման կայունությամբ, վալիդացիների առկայություն Բացթողման ռեժիմում չափման արժեքների հավաքածու բաղկացած • KBr պատուհաններ

12 հատ • Դեղահատերի պատրաստման ձեռքի մամլիչ 1 հատ •
Հատուկ յուղեր անալիզի համար 100գ • Մազնիսական բռնիչ
1հատ • Գազի կյուվետ (gas cell) 1 հատ • Ազատի հավանգ -
հավանգակոթով 1 հատ • Շպատելներ 10 հատ • KBr փոշի, 100
գր - 1 հատ • Կադապարների հավաքածու 7մմ հաբերի համար - 1
հատ • Հաբի կրիչ - 1 հատ • Հեղուկների անալիզի համար
բացվող կյուվետ - 1 հատ • Տեֆլոնե միջադիրների հավաքածու •
Ներարկիչներ 2 մլ - 2 հատ • Մածուցիկ նմուշների անալիզի
համար նախատեսված կյուվետ - 1 հատ • Ունիվերսալ նմուշի
կրիչ - 1 հատ • Թաղանթների համար կրիչ-քարտերի հավաքածու
- 10 հատ Լրիվ ներքին անդրադարձման խախտման ռեժիմում
չափման արտետուար Ge բյուրեղ -1 հատ • Բնութագիրը`
Գերմանիումի բյուրեղ, Ge, անկյուն 45 աստիճան, Smart ARK
Trough Plate, Ge, 45 degree Ներկառուցված Ռաման
սպեկտրաչափի մոդուլ 1 հատ Առանց արտագին միացումների
մոդուլային ՖS ռաման սպեկտրաչափ • Ներառում է 1064 նմ
լազեր 500մՎ 50 միկրոն հետքային չափսերով • Տվյալների
հավաքագրումը ոչ քիչ քան (x, y, z) 100 մմ x 150 մմ x 25 մմ. •
Տվյալների հավաքագրումը և կառավարումը ծրագրային
ապահովման միջոցով • Դետեկտոր InGaAs • Ճառագայթման
չափսը 60 մկմ • Լազերի անվտանգության համակարգ դաս 1 (
դռնակը բացելու դեպքում ավտոմատացված անջատվում է) •
Ներկառուցված տեսախցիկի առկայություն տվյալների
արխիվացման և պահպանման ֆունկցիայով • Նմուշի չափսերի
կալիբրման հնարավորություն • Հոսանքի սնուցումը ԻԿ
սպեկտրաչափի միջոցով • Հեղուկ նմուշների անալիզի
սրվակների հավաքածու Գազային քրոմատագրի և
ինֆրակարմիր սպեկտրոմետրի միացման մոդուլ 1 հատ •
Բաղկացած տաքացվող փոխանցիչից, գազի խցիկից (USB-ով),

գազահեռացման ածխե ֆիլտրներից • Դետեկտոր հեղուկ N2 սառեցված MCT-A դետեկտոր CdTe պատուհաններով • Փոխանցիչի առավելագույն կայուն ջերմաստիճանը 300°C • Օպտիկական կարգավորման սեղմակի առկայություն • Օպտիկայի առկայություն • 15 սմ X 1սմ լույսի խողովակ • Ծրագրային կառավարման հնարավորությամբ • Տվյալների հավաքագրման հնարավորություն • Գոլորշային ֆազերի գրադարան 8000 սպեկտր • Մոդուլի միացման կաբել Մոդուլային Գազային քրոմատագիր 3 հատ • Երեք հեշտ փոփոխվող դետեկտորների և երկու հեշտ փոփոխվող ներարկման համակարգեր /առանց խողովակների դիզայնով/ տեղադրելու հնարավորություն: • Էլեկտրոնային պնեվմատիկ հսկողություն (ԷՊՀ) բոլոր խորշիկների և դետեկտորների համար • Ներարկման համակարգերի քանակը ոչ քիչ քան 2 համակարգ • Հոսքի բաժանման գործակիցը 12500/1 • Ճնշման տիրույթը ոչ նեղ 0-1050կՊԱ • Ընդհանուր հոսքերի տիրույթը 5 ից 1250մլ/րոպե , սանդղակավորումը 0,1մլ/րոպե: • Նախատեսված բոլոր մագանթային աշտարակների համար (50 to 530 մկմ ներքին) • Ներարկման համակարգի մաքսիմալ ջերմաստիճանը ոչ քիչ քան 400 °C Աշտարակի թերմոստատը -Աշխատանքային ջերմաստիճանը - +3-ից ից 450 °C CO2 սառեցումով -50 ից 450 °C • Պահման ժամանակի կրկնելիություն - 0.008% կամ 0.0008 րոպե • Մակերեսի վերարտադրողականություն - « 0,3%RSD • Ջերմաստիճանի կարգավորելու ճշտությունը - 0.1 °C • Աջակցում է ոչ քիչ քան 32 տաքացման ծրագիր, ոչ քիչ քան 33 հարթակներով: Թույլատրելի են բացասական արժեքներ: • Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն արժեքը +125 °C/րոպե • Առավելագույն անդադար աշխատանքի ժամանակը 999.99 րոպե (կամ 16.7 ժամ) • Ջեռոցի սառեցման ժամանակը -4

րոպեում 450°C-ից մինչև 50°C սառելու համար • Ներկառուցված հեղուկ բյուրեղային էկրան կառվարման հնարավորությամբ • Ներկառուցված լույսի աղբյուր աշտարակի փոխարինման և այլ աշխատանքների համար • 16 փականների տեղադրման հնարավորություն օժանդակ տաքացուցիչի օգնությամբ • Չափսերը ճակատային լայնությունը 44 սմ • Ներարկման համակարգերի և դետեկտորների off line ռեժիմում վերանորոգման աշխատանքների կատարման հնարավորությամբ: Մոդուլյար Բոց իոնային դետեկտոր 2 հատ • Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ մինչև 450 °C սանդղակավորումը՝ 0.1 °C • Մաքսիմալ տաքացման արագությունը 125 °C/րոպե Հայտնաբերման սահմանը 1.2pg/s դոդեկան կամ համարժեք Տվյալների գրանցման հնարավորություն՝ ոչ պակաս քան 600 Հգ հաճախությամբ Մոդուլյար Բոց ֆոտոմետրիկ դետեկտոր 1 հատ • Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ մինչև 450 °C - Սանդղակավորումը՝ 0.1 °C • Գծային դինամիկ միջակայքը 104 Ֆոսֆորի և 103 ծծմբի համար • Հայտնաբերման սահմանը ըստ ֆոսֆորի ոչ ավել քան 100Ֆգ/վ • Հայտնաբերման սահմանը ըստ ծծմբի 5պկգ/վ • Գազերի հոսքի տիրույթը ոչ նեղ քան 0-100մլ ջրածնի համար • Գազերի հոսքի տիրույթը ոչ նեղ քան 0-50մլ օդի համար Տվյալների գրանցման հնարավորություն՝ ոչ պակաս քան 300 Հգ հաճախությամբ Ազոտ ֆոսֆորային դետեկտոր 1 հատ • Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ մինչև 450 °C - Սանդղակավորումը՝ 0.1 °C • Գծային դինամիկ միջակայքը ոչ պակաս քան 104 Ֆոսֆորի և ազոտի համար • Հայտնաբերման սահմանը ըստ ֆոսֆորի 100Ֆգ/վ • Հայտնաբերման սահմանը ըստ ազոտի 5պկգ/վ • Ընտրողականությունը 80000 : 1 gN/gC, 200000 to 1 gP/gC • Գազերի հոսքի տիրույթը 0-10 մլ ջրածնի

համար • Գազերի հոսքի տիրույթը 0-500 մլ օդի համար
-Տվյալների գրանցման հնարավորություն՝ 300 Հց
հաճախությամբ Մաս սպեկտրաչափական դետեկտոր
Նախատեսված գազային քրոմատագրի համար 1 հատ • Մաս
սպեկտրաչափ կվադրոպոլային անալիզատոր • Մասսաների
ստաբիլությունը՝ • Շեղումը 0,1 Ա.Մ.Մ./48 ժ • Մասսաների
ինտերվալը՝ 1.2 - 1100 Ա.Մ.Մ. • Բաժանելու հնարավորությունը՝
 $\Delta m \geq 0,4$ Ա.Մ.Մ. • Սկանավորման արագությունը՝ 20000 Ա.Մ.Մ./վ •
Հայտնաբերման սահմանը՝ 5 ֆեմտոգրամ օկտաֆտորնաֆտալեն

- Ազդակ/աղմուկ հարաբերությունը՝ • 2000:1, 1մկլ և 1
պիկոգրամ/միկրոլիտր խտությամբ օկտաֆտորնաֆտալեն: •
Էմիսիոն հոսանքը կարգավորվող մինչև 350միկրո ամպեր •
Էլեկտրոնների աղբյուրը առանց լար • Առանց վակուումը գցելու
վերանորոգման հնարավորություն • ԳԶ-ՄՍ փոխանցման գծի
ջերմաստիճանը, կարգավորվող մինչև 400°C • Դետեկցիոն
համակարգի գծայնության դինամիկ տիրույթը 109 •
Վակուումային համակարգը, մասս սպեկտրոմետրում
ներկառուցված անվտանգության փականներ Ավտոմատացված
ներարկման համակարգ -1հատ • Ներարկչի ծավալը 10մկլ, 5 և
0.5մկլ հնարավորությամբ • Մաքսիմալ ներարկման ծավալը 5մկլ
- Մինիմալ ներարկման ծավալը 0.01մկլ • Մնացորդային
քանակը(Carryover) 0.001 % • Սանդղակավորումը ոչ ավել քան
0.01մկլ • Նմուշների սրվակները 8 հատ 2մլ • Ամբողջական
ծրագրային կառավարմամբ Ավտոմատացված երկակի
ներարկման համակարգ -1հատ • Ներարկչի ծավալը 10մկլ, 5 և
0.5մկլ հնարավորությամբ • Մաքսիմալ ներարկման ծավալը 5մկլ
- Մինիմալ ներարկման ծավալը 0.01մկլ • Մնացորդային
քանակը(Carryover) 0.001 % • Սանդղակավորումը 0.01մկլ •
Նմուշների սրվակները ոչ քիչ քան 2 X 8 հատ ֆորմատով 2մլ •

Ամբողջական ծրագրային կառավարմամբ Գագ քրոմատոգրաֆի
Եվ դետեկտորների ծախսանյութերի հավաքածու •
Ավտոմատացված ներարկման համակարգի ներարկիչ, 10 մկլ,
ասեղի չափսը 25, երկարությունը 50 մմ 6 հատ. •
Քրոմատոգրաֆիկ աշտարակ ԳԶ-ի համար պոլիդիմեթիլսիլոքսան
TG-1MS չափսերը՝ երկարությունը 60մ, շերտի հաստություն
0,25մմ,: Եվրոպական սերտիֆիկատի առկայություն 1 հատ •
Քրոմատոգրաֆիկ աշտարակ ԳԶ-ի համար պոլիդիմեթիլսիլոքսան
TG-5MS չափսերը՝ երկարությունը 60մմ, շերտի հաստություն
0,25մմ: Եվրոպական սերտիֆիկատի առկայություն 1 հատ •
Քրոմատոգրաֆիկ աշտարակ ԳԶ-ի համար պոլիէթիլենգլիկոլ
TraceGOLD TG-WAXMS չափսերը՝ երկարությունը 60մ, շերտի
հաստություն 0,25մմ: Եվրոպական սերտիֆիկատի առկայություն
1 հատ • Քրոմատոգրաֆիկ աշտարակ ԳԶ-ի համար
պոլիդիմեթիլսիլոքսան/ պոլիէթիլենգլիկոլ TGPOLAR չափսերը՝
երկարությունը 60մ, շերտի հաստություն 0,25մմ: Եվրոպական
սերտիֆիկատի առկայություն 1 հատ • Քրոմատոգրաֆիկ
աշտարակ ԳԶ-ի համար
պոլիդիմեթիլսիլոքսան/ցիանոպրոպիլֆենիլ TG 1701MS չափսերը՝
երկարությունը 60մ, շերտի հաստություն 0,25մմ,: Եվրոպական
սերտիֆիկատի առկայություն 1 հատ • Քրոմատոգրաֆիկ
աշտարակ ԳԶ-ի համար
պոլիդիմեթիլսիլոքսան/ցիանոպրոպիլֆենիլ TG 624 չափսերը՝
երկարությունը 60մ, շերտի հաստություն 0,25մմ,: Եվրոպական
սերտիֆիկատի առկայություն 1 հատ • Գագ քրոմատոգրաֆի
տեղադրման հավաքածու 1 հատ • Մաս սպեկտրաչափ
տեղադրման հավաքածու 1 հատ • Ֆերուլաներ 0,1-0.25 մմ (ID),
10/տուփ. 1 տուփ • Ֆերուլաներ VESPEL 0,32 մմ, 10/տուփ. 1
տուփ • Ֆերուլաներ VESPEL, 0,53 մմ (ID),10/ տուփ. 1 տուփ •

Ձգման օղակներ SSL, 5/ տուփ. 4 տուփ • Սեպտաներ
տրամագիծը 11մմ 50/ տուփ. 4 տուփ • ԳՔ լայներ
SPLIT/SPLITLESS, 4 x 6,3 x78,5 մմ, 5/ տուփ 2 տուփ • ԳՔ լայներ
SPLIT/SPLITLESS, 4 x 6,5 x78,5 մմ, 5/ տուփ. 2 տուփ • Սրվակներ
կափարիչով 9 մմ (սեպտա տեֆլոն/սիլիկոն), 100 / տուփ. 4տուփ
• Միջադիրներ 300 մկլ, 100/ տուփ. 2 տուփ • Քարշիչ իներտ
գազի Մետաղական ֆիլտր նախատեսված He, H2, N2, AR գազերի
համար (6 գ H2O, 1 լ O2, 12գ HCs) ինդիկատորով 2 հատ •
Լատունային սեղմակներ անհրաժեշտ բոլոր գազերի անցկացման
համար • Գազի փական 6 հատ, • Ֆիլամենտ 2 հատ • Գազի
կարգավորիչներ պատի ձգման ֆունկցիայով 2 հատ • Հոսանքի
Ախտափան սնուցման սարք 6000 ՎԱ, 1 հատ Ծրագրային
կառավարումը • Համակարգը պետք է կառավարվի մեկ
ծրագրային փաթեթով • Ծրագիրը պետք է համապատասխանի
21 CFR Part 11 պահանջներին, օգտատերերի կառավարման
համակարգ • Ավտոմատացված տվյալների դուրս բերման
հնարավորություն • ԻԿ սպեկտրերի մշակման ծրագրի
առկայություն • Ռաման սպեկտրերի գրադարան 11000 սպեկտր •
ԻԿ սպեկտրերի գրադարան ոչ քիչ 9000 սպեկտր • Գազ ֆազի
գրադարան 8000 սպեկտր • Մաս սպեկտրերի գրադարան
պարունակությունը 300000 սպեկտր • Մաս սպեկտրների
գրադարան սպեցիֆիկ թունաբանական հետազոտությունների
համար 2600սպեկտր • Պոլիմերային նյութերի ուսումնասիրման
գրադարան • Մաս սպեկտրների դեկոնվոյուցիայի սպեցիֆիկ
ծրագրի առկայություն • Ոչ քիչ քան 2 Core i7 կամ համարժեք
համակարգչի առկայություն ներառված մոնիտորներ 2 հատ ոչ
փոքր քան 27 դույմ • Սարքի կարգաբերումը, թողարկումը պետք
է կատարվի սերտիֆիկացված մասնագետի կողմից:
Մատակարարը տրամադրում է՝ Անհրաժեշտ հելիում գազերը 3

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | | | <p>հատ 50լ մետաղական բալոնով 200 բար ճնշում , 99,9999% մաքրությամբ, իր գազաճնշային կարգավորիչներով և գազի մաքրման ֆիլտրերով (խոնավություն, ածխաջրածիններ): Ջրածնի գեներատոր 200մլ/րոպե արտադրողականությամբ, ջրածնի մաքրությունը ոչ պակաս քան 99.9995տոկոս, նախատեսված ԳՔ մեթոդների համար, չորացնող քարտրիջի առկայություն 1 հատ: Մաքուր օդի գեներատոր ճնշումը ոչ պակաս քան 6 բար , յուղերից և ածխաջրածիններից ազատ օդի մատակարարում ոչ պակաս քան 1000մլ/րոպե, նախատեսված ԳՔ մեթոդների համար 1 հատ: Ազոտի գեներատոր ոչ պակաս քան 500մլ/րոպե արտադրողականությամբ ազոտի մաքրությունը 99.999 տոկոս, ճնշումը ոչ պակաս 5 բար նախատեսված ԳՔ մեթոդների համար 1 հատ: Սերտիֆիկացված մասնագետի կողմից համակարգի տեղադրում և կարգաբերում Սերտիֆիկացված մասնագետի կողմից ԳՔ ՄՍ - ԻԿ -Ռաման մեթոդներով նյութագիտական , թունաբանական փորձաքննությունների իրականացում , անձնակազմի ուսուցում ոչ 10 օր Մասնագետների վերապատրաստում արտադրողի ուսումնական լաբորատորիաներում Երաշխիք 2 տարի: Կցված է 6a9bf408.docx</p> |
|--|--|--|--|--|

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային սամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Ներսիսյան 10-3/1

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

2500010857380100

01506928

պրոռեկտոր Արման Մալխասյան

/ստորագրություն/

Կ.Տ

00650292

Խաչատուր Շաքարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|--|-------------------|---------------------------|---------------------------|------------------|------------------------------|------------------|--|
| հրավերով նախատես ված չափ աբաժնի համարը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 1 | հատ | 259800000 .00 | 259800000.00 | 1 | ք. Երևան Ալեք Մանուկյան 1 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023թ.-ի սեպտեմբերի 30-ը: |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավելի լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ

Հասցե՝ Ալեք Մանուկյան 1
Արդշինբանկ ՓԲԸ
247010000906
01506928
պրոռեկտոր Արման Մալխասյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հասցե՝ Երևան, Ներսիսյան 10-3/1
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
2500010857380100
00650292
Խաչատուր Շաքարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Վարանքի | | | | | | | | | | | | | | | | |
|------------------------------|---|---|--|------|------|------|------|-------|-------|------|------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| հրավերով և խառնուկայի համարը | գնումների պլանով և խառնուկայի միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը | |
| 1 | 33111450/2 | Տատանողական և մասսա՝ լիստիվային պիլայի կայան համակցված գազ քրոմատոգրաֆի հետ | | | | | | | | | | 259800000.0 | 259800000.0 | 259800000.0 | 259800000.0 | 259800000.0 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ

օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

01506928

պրոռեկտոր Արման Մալխասյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Ներսիսյան 10-3/1

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

2500010857380100

00650292

Խաչատուր Շաքարյան

/ստորագրություն/

Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «__» 20__ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 20__ թ.

Պայմանագրի համարը՝ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «_____» 20__ թ. դուրս գրված N __ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|----------------------------|---|---------------------|---|------------------|--|-------------------------------------|--|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| ըստ պայմանագրով հաստատված գնման ականացույցի | | | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ականացույցի | փաստացի | | | |
| 1 | Տատանողակա ն և մաս սպեկ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|
| տրոսկոպիայի կայան համակցված գազ քրոմատո գրաֆի հետ | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 4.1
_____/_____/2023թ. կնքված
ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ
Սույնով արձանագրվում է, որ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ -ի
(այսուհետ՝ Գնորդ) և Իմմունոֆարմ ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ. _____ -ին կնքված N ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____ -ին հանձնման-
ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|----------------|---------------------|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Տատանողական և մաս սպեկտրոսկոպիայի կայան համակցված գազ քրոմատոգրաֆի հետ | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական
օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն